Նվիրվում է
Ռուսաստանի հայերի միության
10-ամյա հոբելյանին

Ցայտուք
ՏԱՍՆԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ

Երևան 2010

2010 թվականին լրանում է «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության ստեղծման 10 տարին: Տաս տարին պատմության համար մի ակնթարթ է: Եվ այդ կարճ ժամանակահատվածում ՌՀՄ-ն ոչ միայն կայացավ, ճանաչվեց ու հեղինակություն ձեռք բերեց Ռուսաստանում, այլև դուրս եկավ միջազգային ասպարեզ՝ հայտնի դառնալով իր իրագործած ծրագրերով ու լավ գործերով: ՌՀՄ-ն լայնամասշտաբ գործունեություն է ծավալել նաև Հայաստանում և Արցախում:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող ներկա հրատարակության նպատակն է համառոտակի ներկայացնելով Հայաստանում և Արցախում իրագործված որոշ ծրագրեր, հանգամանորեն պատմել Հայաստանի գիտական և ստեղծագործական մտավորականության գործունեության արդյունավետության բարձրացմանը, երկրի մտավոր կյանքի աշխուժացմանը միտված ծրագրերի մասին:

Հրատարակության պատասխանատու և խմբագիր՝
ՌՀՄ փոխնախագահ Վլ. Աղայան

ՏԱՍՆԱՄՅԱ ՃԱՆԱՊԱՐՀ

Ընթացիկ տարին «Ռուսաստանի հայերի միություն» (ՌՀՄ) համառուսաստանյան հասարակական կազմակերպության համար հոբելյանական է. լրանում է կազմակերպության ստեղծման տասնամյակը: Հոբելյանը կառույցի գործունեության արդյունքների ամփոփման առիթ է, միաժամանակ առիթ է նաև անցած ուղուն հետադարձ հայացք գցելով հանդերձ՝ գործողությունների նոր ծրագրեր կանխագծելու համար:

Նախ պետք է նշել, որ Ռուսաստանի հայերի միությունը նոր ժամանակների կազմակերպություն է իր կառուցողական ծրագրերով ու անելիքների կոնկրետությամբ:

Նոր հարյուրամյակի մարտահրավերների պայմաններում համահայկական խնդիրների հրատապությունը հրամայական են դարձնում ներհամայնքային համախմբումից անցնել վերհամայնքային կառույցների ձևավորմանը: Այստեղ խոսքը ինքնակազմակերպման, համախմբման կազմակերպական-ինստիտուցիոնալ որակապես նոր կառույցի մասին է, այնպիսի կառույցի, ինչպիսին Ռուսաստանի հայերի միությունն է, որը իր տասնամյա գործունեության ընթացքում դարձել է հետևողականության, ավանդապահության և նոր օրվա բացահայտումների միաձուլման ակնառու օրինակ:

Այսօր Ռուսաստանի հայերի միության գոյության տասնամյա բարձունքից նայելով նրա ծավալած բազմաբեղուն գործունեությանը, անվերապահորեն կարելի է ասել, շատ ու շատ բան է արված թե՛ Ռուսաստանում և թե՛ Հայաստանում ու Արցախում: Սակայն մենք նպատակ չենք հետապնդում այս փոքրիկ գրքույկում մանրամասն պատմել Ռուսաստանի հայերի միության կատարած գործերի, իրականացրած ծրագրերի մասին, քանզի այդ մասին ընթերցողը կարող է կարդալ հրատարակության պատրաստ, կազմակերպության 10-ամյակին նվիրված գունազարդ հանդեսի էջերում:

Ներկա հրատարակությունում կփորձենք համառոտակի ներկայացնել այն բազմաբնույթ ծրագրերը, որոնք կազմակերպության կողմից իրագործվել են Հայաստանում և Արցախում, իսկ ավելի ստույգ՝ պատմել գործող մի ծրագրի մասին, որի նպատակն է **նպաստել Հայաստանի գիտական և ստեղծագործական մտավորականության գործունեության ակտիվացմանը, երկրի մտավոր կյանքի աշխուժացմանը:**

Մի առիթով Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրամյանը նշել է. **Մեր համար չափազանց կարևոր է աշխարհի հայության Հայրենիքը տեսնել որպես տնտեսապես հզոր պետություն՝ ամուր կանգնած իր ոտքերի վրա: Չէ՞ որ դրանից է կախված բոլոր հայերի ինքնազգացողությունը, որտեղ էլ նրանք ապրեն: Զգալ հայրենիքի շունչը, նրա մշտական ներկայությունը կողքիդ, ամրապնդել կապը նրա հետ, հոգ տանել նրա մասին՝ յուրաքանչյուրիս կենսական պահանջն է:**

Ելակետ ունենալով այդ ամենը՝ Ռուսաստանի հայերի միությունը անցած 10 տարիների ընթացքում, ի բարօրություն Հայաստանի և Արցախի, իրագործել է սոցիալ-տնտեսական, բարեգործական, կրթամշակութային, զարգացման բազմաթիվ և բազմաբնույթ ծրագրեր:

Մատաղ սերունդը նվեր ստացավ նորացված դպրոց 700 աշակերտի համար

Դեռ նոր էր մեկնարկել իր գործունեությունը կազմակերպությունը, երբ Արա Աբրամյանն իր փոքրիկ հայրենիքում՝ Մալիշկայում, կառուցեց ամբողջական համալիր՝ հոգևոր, մշակութային և կրթական՝ ս. Աննայի եկեղեցին, հայ և ռուս

Մալիշկայի Սուրբ Աննայի եկեղեցին

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի բացման արարողությունը

ժողովուրդների բարեկամության թանգարանը, 700 աշակերտական տեղով դպրոցը:

Իր գործունեության ընթացքում ՌՀՄ-ն առանձնահատուկ տեղ է հատկացրել հայ ժողովրդի առջև ծառացած գերակայություն ունեցող այնպիսի մի խնդրի, ինչպիսին աջակցությունն է Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը, հայոց պետականության կայացմանն ու ամրապնդմանը: Իսկ այդ ամենի համար անհրաժեշտ է ստեղծել ամուր տնտեսական հիմք, դինամիկ զարգացող էկոնոմիկա՝ ընդգրկելով Սփյուռքի հսկայական ներուժը: Հենց այդ նպատակն էլ ելակետ ընդունելով՝ Ռուսաստանի հայերի միությունը Հայաստանում պարբերաբար կազմակերպում է հայ-ռուսական ներդրումային համաժողովներ՝ Ռուսաստանից ժամանած մեծաթիվ հայ և ռուս գործարարների մասնակցությամբ: Իսկ Արտաքին տնտեսական կապերի համառուսաստանյան ընկերակցության աջակցությամբ Երևանում հրավիրեց Հայկական միջազգային տնտեսական ֆորում, որի աշխատանքներին մասնակցեցին աշխարհի շուրջ 20 երկրների (Ռուսաստան, ԱՄՆ, Իտալիա, Հարավային Կորեա, Բելգիա, Ուկրաինա և այլն) խոշոր, միջին և փոքր բիզնեսի ավելի քան 400 ներկայացուցիչներ: Ֆորումը կարևոր նշանակություն ունեցավ որպես հայ գործարարների և միջազգային ֆինանսական կառույցների ջանքերի միավորման առաջին քայլ՝ ուղղված տնտեսական նախագծերի իրականացմանը Հայաստանում, որի ապացույցն են կնքված բազմաթիվ պայմանագրերը:

Առավել ներկայացուցչական էր 2008թ. Երևանում կազմակերպված ռուս-հայկական տնտեսական համաժողովը, որտեղ քննարկվեցին կարևոր նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են Հայաստանի տնտեսական զարգացման հեռանկարներն ու ներդրումային առաջնահերթ ուղղությունները, Հայաստանի ներդրումային արդի միջավայրի առանձնահատկությունները և նրանց հետ առնչվող խնդիրները:

Հայ-ռուսական տնտեսական համաժողովում (2008 թ.)

Ռուսաստանի հայերի միության գործունեության սոցիալ-տնտեսական ուղղվածության հետ սերտ առնչություն ունի կրթամշակութային ոլորտը: Այստեղ անհրաժեշտ է հիշատակել դպրոցների համակարգչայնացման գործընթացը, որը վերածվել է ***Հայաստանի և Արցախի դպրոցների համակարգչայնացմանը՝ համազգային հոգածություն*** շարժման: Ռազմավարական նշանակություն ունեցող այս խնդրի լուծմանն են տրամադրվել միլիոնավոր դոլարներ, որոնցով ձեռք բերված հազարավոր համակարգիչների և դրանց օժանդակ սարքավորումների հաշվին համակարգչային դասարաններ ու լսարաններ են բացվել Հայաստանի և Արցախի ա-

Այսպիսի ցուցանակներ կարելի է տեսնել Հայաստանի և Արցախի հարյուրավոր դպրոցներում

Համակարգիչների շնորհիվ ճանաչում ենք աշխարհը

վելի քան 700 դպրոցներում, բուհերում, ուսումնական այլ հաստատություններում: Եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր համակարգչային դասարան հագեցվել է առնվազն 5 համակարգչով և տպիչով, իսկ բուհական լսարաններին տրամադրվել է 15-20-ական համակարգիչ, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի հսկայական միջոցներ են տրամադրվել, և այսօր էլ տրամադրվում են այդ շարունակական ծրագրի իրականացմանը:

Համակարգչայնացման գործընթացում չի մոռացվել նաև Հայոց բանակը: Հանրապետության զինվորական ստորաբաժանումներին է տրամադրվել 450 համակարգիչ: Կազմակերպությունը ՀՀ Ազգային ժողովի հետ միասին համակարգչային ուսուցման կենտրոններ է ստեղծել հանրապետության մարզերում, որտեղ ուսուցման գործընթացում ընդգրկված են հաշմանդամ, ծնողազուրկ և անապահով ընտանիքների երեխաներ: Այդ կենտրոններին Միությունը հատկացրել է 400 համակարգիչ:

Դպրոցների համակարգչայնացման ծրագիրը դուրս է ե-

Արա Աբրամյանը Սան-Պաուլո քաղաքի հայկական դպրոցի աշակերտների հետ

կել Հայաստանի և Արցախի սահմաններից՝ ներառելով նաև Սփյուռքի հայկական դպրոցները: Մասնավորապես, համակարգչային դասարաններ են հիմնվել Բրազիլիայի Սան-Պաուլոյի և Արգենտինայի Բուենոս-Այրեսի հայկական կրթօջախներում:

Ռուսաստանի հայերի միության իրականացրած սոցիալական ուղվածության նախագծերից են ***«Կացարան» և «Ձուր գյուղական համայնքին»*** ծրագրերը:

Եվս մի վավերացում և «Բնակարան՝ փախստականներին» ծրագիրը կավարտվի

Առաջին ծրագրի արդյունքում Ադրբեջանից բռնագաղթված փախստականների համար գնվեց երկու շենք 130 բնակարանով, որոնք տրամադրվեցին փախստականների և աղետի գոտու տուժած 130 ընտանիքների՝ անհատույց, որպես սեփականություն: Միությունը ոչ միայն գնել է այդ բնակարանները, այլև հոգացել այդ ընտանիքների բնակարանները

2002 թ-ից այս բնակարաններում ապրող փախստականները արդեն սեփականատերեր են

սեփականաշնորհելու պետական ծախսերը:

Երկրորդ ծրագրով Կոտայքի մարզի Քարաշամբ գյուղի գետամերձ հատվածի բնակիչները ապահովվել են խմելու ջրով:

Արդեն շուրջ 10 տարի է ինչ գործում է թոշակառուների համար նախատեսված բարեգործական ճաշարանը, որտեղ 300 հոգի ստանում են ամենօրյա անվճար սնունդ:

Բարեգործական ճաշարանում

Արցախը ևս իր հիմնախնդիրներով մշտապես գտնվել է Միության ուշադրության կենտրոնում: Կազմակերպությունը և նրա նախագահը զգալի ներդրումներ են արել Գորիս-Լաչին-Ստեփանակերտ, Արցախի Հյուսիս-Հարավ ռազմավարական ճանապարհների, Ստեփանակերտի սառնարանային տնտեսության կառուցման գործում: Ներկայումս Արա Աբրամյանի միջոցներով Ստեփանակերտում կառուցվում է 500 աշակերտական տեղով նոր դպրոց, որի նախագծային արժեքը կազմում է 1.246 մլն դրամ:

Ստեփանակերտում կառուցվող դպրոցը

Ռուսաստանի հայերի միությունը հետևողական աշխատանք է տանում ***Հայաստան – Սփյուռք, Սփյուռք – Սփյուռք կապերի ամրապնդման և զարգացման ուղղությամբ***: Այդ նպատակին ծառայող բարի ավանդույթ է դարձել Ռուսաստանի հայերի միության, ապա նաև Համաշխարհային հայկական կոնգրեսի օրերի անցկացումը Հայաստանում և Արցախում: Ամեն տարի այդ օրերի շրջանակներում Հայաստան է ժամանում մերձավոր և հեռավոր սփյուռքի ներկայացուցչական պատվիրակությունը՝ գործարարների, կրթության, գիտության, մշակույթի ոլորտների, ինչպես նաև ռուս մտավորականության ներկայացուցիչների մասնակցությամբ: Պատվիրակության անդամները այցելում են Երևան, հանրապետության մարզեր, Արցախ՝ գործնական հանդիպումներով,

Գրական-երաժշտական երեկո՝ նվիրված հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանը

տարբեր բնույթի միջոցառումներով ամրապնդելով Հայաստան – Սփյուռք, Սփյուռք – Սփյուռք կապերը: Անհրաժեշտ է նշել, որ այս ծրագրի շրջանակներում կազմակերպվող միջոցառումները հետզհետե ձեռք են բերում որակական նոր իմաստ, բովանդակություն: Դրանք արդեն զուտ զգացմունքային, ժամանցային միջոցառումներից վեր են ածվում գործնական աշխատանքի:

Հայ և ռուս գրողների հանդիպումը Հայաստանի գրողների միությունում

Սկսած 2005 թվականից՝ Միությունը լայն համագործակցություն է ծավալել Ազգային բանակի հետ: Այդ համագործակցությունն ընդգրկել է մշակութային, տեխնիկական օժանդակության և մի շարք այլ ոլորտներ:

Ռուսաստանի հայերի միությունը, Համաշխարհային հայկական կոնգրեսը մեծ տեղ են հատկացնում ***Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացների աջակցությանը:*** Միությանը կից Մոսկվայում գործում է Միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտը, որը դարձել է Հայոց ցեղասպանության հարցերի ուսումնասիրման յուրահատուկ կենտրոն: Ինստիտուտը Երևանում 2004թ. անցկացրեց «Ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում» երկօրյա միջազգային գիտագործնական կոնֆերանս՝ աշխարհի 10 երկրների նշանավոր մասնագետների մասնակցությամբ:

Կոնֆերանսի գլխավոր արդյունքներից մեկն այն էր, որ ձևավորվեց Հայոց ցեղասպանության հրատապ հիմնախնդիրներն ուսումնասիրող փորձագիտական հանձնախումբ:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա Միության միջոցներով հրատարակվել են մի քանի տասնյակ գրքեր ինչպես ցեղասպանության, այնպես էլ Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման հետ առնչվող

խնդիրների վերաբերյալ: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ է գրավում **Յուրի Բարսեղովի «Հայերի ցեղասպանությունը. Թուրքիայի պատասխանատվությունը և միջազգային հանրության պարտավորությունները»** եռահատոր աշխատությունը և **«Լեռնային Ղարաբաղը միջազգային իրավունքում և համաշխարհային քաղաքականության մեջ»** երկհատորյակը:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Այս տարվա հունվարի 27-ին Գիտությունների Ազգային ակադեմիայում կայացավ Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության անդամ երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների համաժողով: Քննարկելով Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի վերաբերյալ միջոցառումների ծրագիրը, մասնակիցները հանդես եկան հայ երիտասարդությանն ուղղված կոչով՝ Հայոց ցեղասպանության 1,5 մլն զոհերի հիշատակը հավերժացնել Հայաստանի ողջ տարածքում 1,5 մլն ծառ տնկելու նախաձեռնությամբ: *«Մենք կոչ ենք անում երիտասարդներին Ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախապատրաստմանը նվիրված միջոցառումներում զգացմունքային մոտեցումներից տեղափոխվել կառուցողական հարթություն և ամբողջ գործընթացը նվիրաբերել Հայաստանի հզորացմանը, հայ պետականության վերելքին ու ամրապնդմանը: Մենք հայոց վիշտը պիտի հիշենք ապրելու, կառուցելու և մեր երկիրը շենացնելու համար: Սա պետք է դառնա հայ երիտասարդության նշանաբանը՝ մեր անմեղ նահատակների հիշատակի հավերժացման գործում»*, հունվարի 27-ին հնչած

այս կոչը մեծ արձագանք ստացավ երկրում: Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի այս նախաձեռնությանը միացել են մի շարք կրթօջախներ, Ազգային բանակի զորամասեր, հասարակական կազմակերպություններ, տարբեր քաղաքական կուսակցությունների

երիտասարդական թևեր, Հայաստանում և նրա սահմաններից դուրս ապրող բազմաթիվ հայեր:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը նշանավորելու՝ 5 տարում 1,5 մլն ծառ տնկելու նախաձեռնությունը մի քանի նպատակ ունի. հավերժացնել Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը, նպաստել շրջակա միջավայրի բարելավման, հայ երիտասարդության քաղաքացիական ակտիվության բարձրացման գործընթացներին:

Մարտի 31-ին մայրաքաղաք Երևանում մեկնարկեց համազգային այս շարժումը: Այնուհետև ծառեր տնկվեցին մի շարք մարզերում: Եվ այսպես ընթացիկ տարվա գարնանն արդեն տնկվել է շուրջ 10 հազար ծառ:

ՀՀԿ-ն և ՌՀՄ-ն ՀՀ Սփյուռքի նախարարության, ՀՀԳԱԱ-ի հետ համատեղ ընթացիկ տարվա հունիսի 2-ին անցկացրեցին գիտաժողով, որտեղ քննարկվեցին Ցեղասպանության 100-ամյակի առթիվ միասնական հայեցակարգային ծրագիր մշակելու հետ առնչվող խնդիրները:

Ռուսաստանի հայերի միության գործունեությունը չի շրջանցել նաև Հայաստանի ռուսական համայնքի ներկայացուցիչներին, հատկապես ռուսական Լերմոնտովո և Ֆիոլետովո գյուղերի բնակչությանը:

Ամեն տարի Հայաստանում ՀՀԿ և ՌՀՄ օրերի շրջանակներում պատվիրակության անդամները հանդիպում են Լերմոնտովո և Ֆիոլետովո գյուղերի բնակչության հետ, որի ընթացքում դպրոցները ստանում են դպրոցական պիտույքներ, դասագրքեր, համակարգիչներ, իսկ ուսման գերազանցիկները՝ նվերներ:

Միությունը սերտ կապեր է հաստատել Արտաշատում տեղակայված սահմանապահ զորամասի հետ: Շարունակելով Հայաստանի և Արցախի դպրոցների համակարգչայնացման ծրագրի իրականացումը՝ Ռուսաստանի հայերի միությունը հոգացել է նաև Արտաշատ քաղաքի սահմանապահ ջոկատի ռուսական դպրոցում համակարգչային դասարան բացելու գործը: Կազմակերպությունը համակարգիչներով և հեռուստացույցներով է հագեցրել նաև սահմանապահ ուղեկալները:

2010 թ.-ի մարտին տեղի ունեցավ ռուս ուղղափառ Սուրբ Խաչ եկեղեցու հիմնարկեքի արարողությունը: Եկեղեցին կառուցվում է Իսակովի պողոտայում՝ Երևանյան լճի

ափին և, ըստ մակետի, տպավորիչ տեսք է ունենալու և մայրաքաղաք մտնողներին հիշեցնելու է հայ-ռուս բարեկամության մասին:

Արարողությանը ներկա գտնվող Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլը ասաց, որ սա նշանակալի իրադարձություն է, որին շատ են սպասել: Ռուս ուղղափառ եկեղեցու առաջնորդը մաղթեց, որ եկեղեցին ուղղափառների նոր աղոթատուն լինելուց բացի դառնա նաև հայ և ռուս եկեղեցիների, ժողովուրդների բարեկամության ու համագործակցության ևս մեկ հանգրվան:

«Հայոց և Ռուսիո սրբազան հողի վրա բարձրացող նվիրական մեր տաճարները խորհրդանշում են նաև մեր երկու ժողովուրդների եղբայրական գործակցության ոգով հատկանշված դարավոր բարեկամությունը և գալիս են նոր ընթացք և զարգացում բերելու մեր եկեղեցիների համագործակցությանը», իր օրհնությունը փոխանցեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ:

Եկեղեցու շինարարական աշխատանքները հովանավորում է Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրամյանը:

Բարեգործությունից դեպի մտավոր-մշակութային կյանքի աշխուժացման հարթություն

Մեր ժողովուրդը, որպես բարձր բանականությամբ ու իմաստությամբ օժտված ժողովուրդ, միշտ էլ առանձնահատուկ տեղ է հատկացրել մտավոր արժեքներին: Դրա վառ ապացույցն է բազմադարյան պատմության ընթացքում հայ մարդու ստեղծած հարուստ մշակույթը, գրականության և արվեստի փառահեղ գործերը:

Այսօր էլ Հայաստանի, հայ ժողովրդի նյութական և բարոյական բարգավաճման, նոր հարյուրամյակի մարտահրավերներին դիմակայելու համար վճռորոշ նշանակություն ունեն գիտությունն ու մշակույթը: Հայաստանի նման երկրի համար մտավոր սեփականությունը կարող է դառնալ հզորության, հարստության աղբյուր և համաշխարհային ճանաչում բերել նրան:

Հանրահայտ է, որպեսզի զարգանա գիտությունն ու մշակույթը, ստեղծվեն մարդկային կյանքի բոլոր կողմերն ընդգրկող գրականության, երաժշտության, արվեստի գործեր, ապա այդ ամենն արարող մտավորականը պետք է ունենա ապրելու և ստեղծագործելու նորմալ պայմաններ: Մինչդեռ Հայաստանի գիտական և ստեղծագործական մտավորականությունը վերջին երկու տասնամյակում, սուբյեկտիվ թե

օբյեկտիվ պատճառներով հայտնվել է, մեղմ ասած, ոչ բարենպաստ պայմաններում:

Հենց այս իրողությունն էլ հաշվի առնելով՝ Ռուսաստանի հայերի միությունը ստեղծման իսկ օրից սկսել է համագործակցել Հայաստանի Գիտությունների Ազգային ակադեմիայի, ստեղծագործական միությունների հետ և փորձել օգտագործել բոլոր հնարավոր միջոցները, որոնցով կարելի է օժանդակել երկրի գիտական և ստեղծագործական մտավորականության աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, նրանց գործունեության ակտիվացմանը: Այս բնագավառը այնուհետև դարձել է Ռուսաստանի հայերի միության կողմից Հայաստանում ծավալած գործունեության ամենակարևոր ուղղություններից մեկը:

Ռուսաստանի հայերի միությունը առաջինը սկսեց համագործակցել ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի հետ: Դրանք այն տարիներն էին, երբ Ազգային ակադեմիայում, նրա մի քանի տասնյակ ինստիտուտներում, գրադարաններում աշխատանքային անհրաժեշտ պայմաններ չկային, նույնիսկ չէին ջեռուցվում շենքերը: Ռուսաստանի հայերի միության ֆինանսական օժանդակությամբ հսկայական աշխատանք կատարվեց գիտնականների աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ, ձեռք բերվեցին և տեղադրվեցին ժամանակակից սարքավորումներ, համակարգիչներ: Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ տրամադրվեցին գիտական մշակումների կազմակերպման, գիտահետազոտական աշխատանքների արդյունքների տպագրման համար:

Ռուսաստանի հայերի միությունը լայնորեն համագործակցում է նաև Հայաստանի գրողների, նկարիչների, կոմպոզիտորների և երաժշտագետների, ժուռնալիստների միությունների հետ: Այդ համագործակցությունը սկսել է դեռևս Միության գոյության առաջին տարիներից և տարեցտարի ձեռք է բերում նոր իմաստ ու բովանդակություն:

Եթե առաջին տարիներին ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի, ստեղծագործական միությունների հետ համագործակցությունը ծավալվում էր հիմնականում բարեգործության դաշտում, ապա այսօր այն հետևողականորեն տեղափոխվել է երկրի մտավոր կյանքի աշխուժացման հարթություն, որտեղ գերակա դեր է կատարում գիտական և ստեղծագործական մտավորականության աշխատանքի արդյունավետության բարձրացմանը նպատակաուղղված գիտամշակութային-կազմակերպչական գործունեությունը: Սա արդեն համագործակցության զարգացման նոր փուլ է, որ պահանջում է նոր մոտեցումներ, նոր հարաբերություններ:

Այդ նոր մոտեցման դրսևորումն է երկու տարի առաջ ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի և Ռուսաստանի հայերի միության նախաձեռնությամբ ստեղծված Գիտության զարգացման հիմնադրամը, որի համանախագահներն են Ռ. Մարտիրոսյանը և Ա. Աբրամյանը: Նույնը կարելի է ասել Համահայկական գրական հիմնադրամի մասին: Այդ երկու հիմնադրամներում էլ իր ծանրակշիռ նեդրումն է արել Արա Աբրամյանը:

Համագործակցության նոր փուլին համապատասխանող գիտամշակութային-կազմակերպչական աշխատանքի արդյունավետ միջոց է դարձել Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության կողմից 2007-ից անցկացվող գիտական և ստեղծագործական աշխատանքների, արդեն բարի ավանդույթ դարձած, **ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ:**

Մրցանակաբաշխության նպատակն է նպաստել Հայաստանի գիտական և ստեղծագործական մտավորականության գործունեության ակտիվացմանը, աջակցել երկրի մտավոր կյանքի աշխուժացմանը:

Առաջին մրցանակաբաշխությունը անց է կացվել Հայաստանի գրողների միության և Հայաստանի ժուռնալիստների միության հետ համատեղ հետևյալ թեմաներով և անվանակարգերով.

Հայաստանի գրողների միություն

Թեման՝ ***«Հայը 21-րդ դարասկզբին»***
Անվանակարգը՝ գեղարվեստական արձակ (վեպ, վիպակ)
Նպատակը՝ Խրախուսել մեր օրերի կյանքը և Հայաստանի անկախության տարիների կենսափորձը արտացոլող երկերի ստեղծմանը:
Մրցույթին ներկայացվեցին 7 գիրք:

Հաղթող ճանաչվեցին՝

Գրիգոր Զանիկյանը՝ «Եռաբլուր» ստեղծագործության համար
Էդվարդ Միլիտոսյանը՝ «Հայոց արևակենտրոն կնիքը» ստեղծագործության համար
Ղուկաս Սիրունյանը՝ «Ուշացած կապիկներ» ստեղծագործության համար

Մրցանակների արժանացած գրողների ստեղծագործությունները հրատարակվել են առանձին ժողովածուներով՝ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրամյանի ֆինանսական օժանդակությամբ:

Հայաստանի ժուռնալիստների միություն

Թեման՝ ***«Աշխարհի հետ՝ մեր ինքնությամբ. Հայաստանը համայն հայության հայրենիքն է»***
Մրցույթին ներկայացվել են 24 աշխատանք:

Հաղթող ճանաչվեցին՝

Գառնիկ Անանյանը /հետմահու/ հատուկ մրցանակ, «Ազգային ինքնությունը՝ ժամանակի հոլովույթում», «Ճանաչենք անցյալը՝ հասկանանք ներկան» հոդվածների համար

Զուլիետա Կաժոյանը՝ առաջին մրցանակ, որպես Հանրային հեռուստատեսության «Ծննդավայր» շարքի հեղինակ և ռեժիսոր

Արա Գոչունյանը՝ երկրորդ մրցանակ, «Ժամանակ» թերթի /Թուրքիա/ գլխավոր խմբագիր՝ «Հայրենիք-սփյուռք համագործակցությունը արդի փուլում» թեմայով աշխարհի նշանավոր մշակութային գործիչների հետ հարցազրույցների շարքի համար

Երրորդ մրցանակներ են շնորհվել

Խիկար Գեղամյանին՝ «Կոտայք» թերթի գլխավոր խմբագիր, «Քարադաշտի Ծարավ-Աղբյուրը» հրապարակախոսական հոդվածի համար

Արտեմ Երկանյանին՝ «Շանթ» հեռուստաընկերության մեկնաբան, քաղաքացիական թեմաներով հեռուստամեկնաբանությունների համար

Հայկարամ Նահապետյանին՝ Հանրային հեռուստատեսության «Հայլուր» ծրագրի լրագրող, սփյուռքին նվիրված լրատվական, վերլուծական հաղորդաշարի համար

Գրիգոր Անիսոնյանին՝ «Նոյեվ Կովչեգ» թերթի գլխավոր խմբագիր, հայրենիք-սփյուռք համագործակցության հարցերի հետևողական լուսաբանման համար

2008 թ.-ից մրցանակաբաշխությանը միացան՝ ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիան, կոմպոզիտորների և երաժշտագետների, նկարիչների միությունները: Մրցանակաբաշխությունը ստացավ **համահայկական** կարգավիճակ և կազմակերպիչների թիվը համալրեց ՀՀ Սփյուռքի նախարարությունը:

«Մրցանակաբաշխություն-2008»-ի արդյունքները

ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիա

Ներկայացված աշխատանքների քանակը՝ 28

Հաղթողներն ըստ անվանակարգերի.

Ճշգրիտ գիտություններ

Համլետ Ավետիսյան՝ ԵՊՀ-ի բարձր էներգիաների ֆիզիկայի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր

Տեխնիկական գիտություններ և ինֆորմատիկա

Յուրի Ավետիսյան ՝ ԵՊՀ-ի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի պրոֆեսոր

Բնական գիտություններ

Տիգրան Կուրտիկյան՝ ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի և դեղագործության կենտրոն, քիմիական գիտ. դոկտոր

Հայագիտություն

Ալբերտ Խաչատյան՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, պատմական գիտությունների դոկտոր

Հասարակական գիտություններ

Ավագ Հարությունյան՝ Խաղողագործության և գինեգործության ինստիտուտ, կենսաբանական գիտ. թեկնածու

Հայաստանի գրողների միություն

Թեման՝ ***«Հայը 21-րդ դարասկզբին»***

Անվանակարգը՝ գեղարվեստական արձակ (վեպ, վիպակ)

Մրցույթին ներկայացվել է 7 աշխատանք:

Հաղթող ճանաչվեցին՝

Ալիս Հովհաննիսյանը՝ «Ճյուղեր և տերևներ» վիպակի համար

Դիանա Համբարձումյանը՝ «Աստված խելքը թռցրել՝ անօգնական նայում է մարդկանց» վիպակի համար

Հրաչյա Սարիբեկյանը՝ «Հոգեբուժարան» վիպակի համար

Հատուկ մրցանակի արժանացավ

Վարուժան Այվազյանը՝ «Պատմություն մեծն Կովկասի» վիպակի համար

Հայաստանի ժուռնալիստների միություն

Թեման՝ «Աշխարհի հետ՝ մեր ինքնությամբ. Հայաստանը համայն հայության հայրենիքն է»

Մրցույթին ներկայացվեցին 32 աշխատանք:

Մրցանակներ շնորհվեցին.

Ռաֆիկ Սահակյանին՝ Արմավիրի մարզային «Հայրենականչ» թերթում հրապարակած «Մոտ ու հեռու ծաղկած կարոտներ» ակնարկաշարի համար

Աղավնի Հարությունյանին՝ «Ազգ» թերթում հրապարակած՝ Թբիլիսիի հայկական Սբ.Նորաշեն եկեղեցու պահպանմանը միտված հոդվածաշարի համար

Շիրակի մարզի **«Շիրակ» հանրային հեռուստաընկերությանը**՝ երիտասարդ սերնդի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող՝ «Փակագիծ», «Ես և դու», «Ստորակետ» հեռուստահաղորդաշարերի համար

Pan Armenia համահայկական տեղեկատվական ցանցին՝ քարոզչական նպատակամետ գործունեության, երեք լեզուներով անվճար, անկողմնակալ տեղեկատվություն սփռելու համար

Հանրային ռադիոյի «Կամուրջ» ծրագրին՝ Հայրենիք-Սփյուռք հիմնախնդիրների արտացոլման և լուսաբանման համար

Արփեն Մովսիսյանին՝ Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստատեսության առաջին ալիքի «Արարատ» կայանով սփռած «Հայից հայ» հաղորդաշարի համար

Ռուզան Զաքարյանին՝ «Արվեստ» էլեկտրոնային ամսագրում ազգային արվեստին նվիրված պարբերական հրապարակումների համար

Արա Թորանյանին՝ «Լե նուվել դ'Արմենի» /Փարիզ/ ամսագրում ծավալած Հայրենիք-Սփյուռք առնչակցությունների սերտացմանն ուղղված հրապարակագրական գործունեության համար

Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միություն

Թեման՝ «Հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստի ստեղծագործական ձեռքբերումներ»

Ըստ անվանակարգերի հաղթողներ են ճանաչվել.

«Կամերային նվագախմբի համար գրված ստեղծագործություններ» անվանակարգում՝

Էդուարդ Հայրապետյանը՝ «Նարցիս» կամերային սիմֆոնիայի համար

Վահրամ Սարգսյանը՝ "Mithis" լարային նվագախմբի համար

«Մենակատարների համար գրված ստեղծագործություններ» անվանակարգում՝

Աշոտ Զոհրաբյանը՝ "Parable" ստեղծագործության համար

Կարեն Անանյանը՝ «Ծիսական պարեր» ստեղծագործության համար

Երգչախմբային երաժշտության անվանակարգում՝

Մարտուն Իսրաելյանը՝ «Սիրո և տրտմության խոսքեր» (ըստ Վահան Տերյանի) ստեղծագործության համար

Աննա Հակոբջանյանը՝ «Տեր, ողորմեա» խմբերգերի համար

«Հայ երաժշտագիտության զարգացման նոր հեռանկարներ» անվանակարգում

Գեորգի Գեոդակյանը՝ «Հայ դասական երաժշտության ձևավորման ուղիներ» գիտական աշխատության համար

Խրախուսական մրցանակի է արժանացել

Յուրի Հարությունյանը՝ «Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների հիման վրա գրված «Երեք խմբերգ» ստեղծագործության համար

Հայաստանի նկարիչների միություն

Թեման՝ «*Հայ կերպարվեստի լավագույն գործերի համար*»

Անվանակարգերը՝ գեղանկար, քանդակ, դեկորատիվ արվեստ, պլակատ

Մրցանակակիրներն են՝

Առաջին կարգի մրցանակ

Գագիկ Ղազարյանը՝ «Վիկտորիա» քանդակի համար

Գետիկ Բաղդասարյանը՝ «Չարենց» դիմաքանդակի համար

Երկրորդ կարգի մրցանակ

Գրիգոր Աղասյանը՝ «Պլեներ» գեղանկարի համար

Զոհրաբ Միրզոյանը՝ «Վենետիկ» գեղանկարի համար

Զավեն Կոշտոյանը՝ քանդակի համար

Երրորդ կարգի մրցանակ

Ռոբերտ Եսայանը՝ «Նռան ծառ» կոմպլեկտի համար

Բորիս Հակոբյանը՝ «Վարդը լուսաբացին» գեղանկարի համար

Փարավոն Միրզոյանը՝ «Դաշտային ծաղիկներով նատյուրմորտ» գեղանկարի համար

Հարություն Ստեփանյանը՝ «Երկնային» դիմաքանդակի համար

Մրցանակաբաշխության դափնեկիրներին ողջունում է ՀՀ Վարչապետ Տ. Սարգսյանը

Գիտական և ստեղծագործական լավագույն աշխատանքների «Մրցանակաբաշխություն-2008»-ի արդյունքների հրապարակման և դափնեկիրների պարգևատրման արարողությունը տեղի է ունեցել 2009 թ. մայիսի 25-ին, Արամ Խաչատրյան Մեծ համերգասրահում: Հանդիսավոր արարողությանը մասնակցել են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը, կառավարության անդամներ, Ազգային Ժողովի պատգամավորներ:

Մրցանակաբաշխության դափնեկիրներին դիպլոմներ է հանձնում Ա. Աբրամյանը

«Մրցանակաբաշխություն-2009»-ի արդյունքները

Ընթացիկ տարվա մայիս-հունիս ամիսներին ամփոփվեցին նաև «Մրցանակաբաշխություն-2009»-ի արդյունքները:

Մրցանակաբաշխությունը նվիրված էր Ռուսաստանի հայերի միության 10-ամյա հոբելյանին: 2009 թ.-ի մրցանակաբաշխության առանձնահատկությունը նախ կայանում էր նրանում, որ գիտական, գրական և մշակութային հովանավորչությունից անցում կատարվեց գիտական և ստեղծագործական լայնածավալ գործունեության:

Երկրորդ՝ աճել է գիտական և ստեղծագործական մտավորականության հետաքրքրությունը մրցանակաբաշխության նկատմամբ: Կտրուկ բարձրացել է մրցանակաբաշխությանը մասնակցող մտավորականության թիվը: Այսպես, գրողների կողմից մրցանակաբաշխությանը ներկայացված գործերի թիվը առաջին տարվա համեմատությամբ աճել է 3 անգամ, գիտնականներինը՝ 35%-ով: Գրեթե նույն աճն է նկատվում նաև մյուս ստեղծագործական միություններում:

ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիա

Ներկայացված աշխատանքների քանակը՝ 37:

Ըստ անվանակարգերի հաղթողներ են ճանաչվել

Հասարակական գիտություններ անվանակարգում առաջին մրցանակը շնորհվել է

Վահան Բայբուրդյանին՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստ. Իրանի բաժնի վարիչ, «Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո» մենագրության համար

Տիգրան Թորոսյանին՝ ՀՀ ԱԺ պատգամավոր, «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում» մենագրության համար

Խրախուսական մրցանակի է արժանացել

Սեդա Գասպարյանը՝ ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, «Գեղարվեստական համեմատությունը որպես լեզվաբանաստեղծական հնար» մենագրության համար

Հայագիտություն անվանակարգում հաղթող է ճանաչվել

Արսեն Բոբոխյանը՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, «Հաղորդակցությունը և փոխանակությունը Կովկասի ու Տավրոսի միջև ընկած լեռնաշխարհում, մ.թ.ա. մոտ 2500-1500թթ.» մենագրության համար:

Խրախուսական մրցանակի է արժանացել

Մերուժան Հարությունյանը՝ ԵՊՀ, Ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ, «Թարգմանելու արվեստը» մենագրության համար

Բնական գիտություններ անվանակարգում առաջին կարգի մրցանակը շնորհվել է՝

Շիրազ Մարգարյանին՝ ԵՊՀ, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, համահեղինակների հետ միասին, «Ε վիտամինի ջուր + դիմեթիլսուլֆօքսիդ և ջուր + դիէթիլսուլֆօքսիդ պարունակող շրջված միցելներում կապնվելու ուսումնասիրությունը սպեկտրոֆոտոչափական եղանակով» 3 հոդվածների համար

Արմեն Թռչունյանին՝ ԵՊՀ, կենսաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, գիտական թեմայի ղեկավար, համահեղինակների հետ միասին, «Բակտերիաների թաղանթների գործառական ակտիվությունը և դրա կարգավորումը» 5 հոդվածների համար

Խրախուսական մրցանակի է արժանացել

Վիգեն Թոփուզյանը՝ ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրեն, համահեղինակների հետ միասին, «α, շ-Դեհիդրոֆենիլալանինի խոլինային էսթերներ, մար-

դու ացետիլխոլինէսթերազի և բութիրիլխոլինէսթերազի դարձելի արգելակիչների նոր դաս» 4 հոդվածների համար

Ճշգրիտ գիտություններ անվանակարգում հաղթող է ճանաչվել

Դավիթ Սարգսյանը՝ ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստ., լաբորատորիայի վարիչ, համահեղինակների հետ միասին, «Օպտիկական պրոցեսները սուբմիկրոնային հաստությամբ ատոմական գոլորշիներում և դրանց կիրառությունները» 7 հոդվածների և 5 թեզիսների համար

Խրախուսական մրցանակի է արժանացել

Մարտին Գրիգորյանը՝ ԵՊՀ, ֆիզիկայի ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, համահեղինակի հետ միասին, «Ուոլշի համակարգի ուժեղացված L^1-greedy հատկության մասին» 2 հոդվածների համար

Ինֆորմատիկա և տեխնիկական գիտություններ անվանակարգում առաջին կարգի մրցանակը շնորհվել է՝

Ժոզեֆ Փանոսյանին՝ ՀՊՃՀ, պրոֆեսոր, համահեղինակների հետ միասին, «Ալմաստանման ածխածնային թաղանթների ստացման եղանակ և սարք» աշխատանքի համար, ԱՄՆ արտոնագիր

Վոլոդյա Երիցյանին՝ «Պլաստպոլիմեր» ԳՀԻ լաբորատորիայի վարիչ, քիմ. գիտությունների թեկնածու, համահեղինակների հետ միասին, «Վինիլացետատի ստացման եղանակ» աշխատանքի համար, ՀՀ արտոնագիր

Խրախուսական մրցանակի է արժանացել

Ստեփան Մեսչյանը՝ ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտ, «Կավային գետնահողերի հոսքաբանության փորձարարական հիմքերը» մենագրության համար

Հայաստանի գրողների միություն

Մրցանակաբաշխության թեման՝ ***«Հայ արձակ. 21-րդ դար»***

Անվանակարգերը՝ վեպ, վիպակ, պատմվածքներ

Մրցույթին ներկայացվել են 20 աշխատանք:

Հաղթողներն ըստ անվանակարգերի.

Վեպ անվանակարգում առաջին մրցանակի են արժանացել երկու հեղինակ՝

Անահիտ Թոփչյանը՝ «Անհետացում» վեպի համար

Հովհաննես Երանյանը՝ «Ամենագեղեցիկ հատվածը» վեպի համար

Վիպակ անվանակարգում՝

Սուսաննա Հարությունյանը՝ «Քարտեզ առանց ցամաքի և ջրի» վիպակի համար

Պատմվածք անվանակարգում՝

Սամվել Կոսյանը՝ լավագույն պատմվածքաշարի համար

Հատուկ մրցանակի է արժանացել

Նորայր Ադալյանը՝ «Ծաղրածուն մեծ քաղաքում» վեպի համար

Հայաստանի ժուռնալիստների միություն

Մրցանակաբաշխության թեման՝ ***«Աշխարհի հետ՝ մեր ինքնությամբ. Հայաստանը համայն հայության հայրենիքն է»***

Ըստ անվանակարգերի մրցանակները շնորհվել են՝

«Պարբերական մամուլի» անվանակարգում

Սերգեյ Վարդանյանին՝ «Ձայն համշենականի» գլխավոր խմբագիր, թերթում հրապարակած հոդվածաշարի համար

Տիգրան Նիկողոսյանին՝ «Հայաստան» թերթի գլխավոր խմբագիր, թերթում տպագրած թեմատիկ նյութերի համար

«Սյունյաց երկիր» թերթին՝ ազգային ինքնությանը նվիրված հրապարակումների համար:

«Հեռուստահաղորդումներ» անվանակարգում

«Շանթ» հեռուստաընկերության «Հեռանկար» հաղորդաշարին

Լոռու «**ՄԻԳ» հեռուստաընկերությանը**՝ ԱՄՆ Սիեթլ քաղաքի հայ համայնքին նվիրված հաղորդաշարի համար

«Ռադիոհաղորդումներ» անվանակարգում

Իրինա Բարսեղյանին՝ հանրային ռադիոյի «Ժամանակի վկան» հաղորդաշարի համար

«Սփյուռքահայ լրատվամիջոցներ» անվանակարգում

Ժիրայր Դանիելյանին /Լիբանան/՝ «Կամար» ամսագրում Հայրենիք-սփյուռք կապերի սերտացմանը նվիրված հրապարակած նյութերի համար

Եվգինե Ղարիբյանին՝ Բոստոնի անկախ հայկական ձայնասփյուռով հաղորդած՝ «Հայաստանը համայն հայության հայրենիքն է» թեմայով ռադիոհաղորդումների համար

Հատուկ մրցանակ է շնորհվել

«Ազգ» օրաթերթին՝ Ռուսաստանի հայերի միության տասնամյակին նվիրված հրապարակումների համար

Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միություն

Հաղթողներն ըստ անվանակարգերի՝

Վոկալ-սիմֆոնիկ, կամերային երաժշտության ժանրում՝

Երվանդ Երկանյան՝ «Նահատակաց հրապարակը Բեյրութում» սիմֆոնիկ պոեմ ստեղծագործության համար

Վահրամ Բաբայան՝ «Կոնցերտ դաշնամուրի և լարային նվագախմբի համար» ստեղծագործության համար

Գործիքային, անսամբլային երաժշտության ժանրում՝

Մելիք Մավիսակալյան՝ «Կոնցերտ-ռապսոդիա կամերային նվագախմբի համար» ստեղծագործության համար

Խմբերգային, վոկալ-գործիքային երաժշտության ժանրում՝

Ռոբերտ Ամիրխանյան՝ «Էջ Միածինն ի հորե» (հոգևոր խմբերգերի շարք) ստեղծագործության համար

Երաժշտագիտության ասպարեզում «Հայ երաժշտության զարգացման նոր հեռանկարներ» անվանակարգում՝

Երաժշտագետների խմբին՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր **Արաքս Սարյանի** ղեկավարությամբ, «Հայ երաժշտական ստեղծագործության տեսության և գեղագիտության խնդիրներ», «Արամ Խաչատրյանը և 20-րդ դարի երաժշտությունը», «Ավետ Տերտերյան-75», «Ժողովրդական ստեղծագործությունը և կոմպոզիտորական արվեստը» ժողովածուների ստեղծման համար

Հայաստանի նկարիչների միություն

Հաղթողներն ըստ անվանակարգերի.

Գեղանկար անվանակարգ՝

Խաչատուր Ազիզյան՝ «Մեր անուշ Հայաստանի կենացը» գործի համար

Սրապիոն Դանիելյան՝ «Ուխտ, գաղթ, մայրեր» գործի համար

Զոհրապ Միրզոյան՝ «Աղոթք, վասն նահատակաց» գործի համար

Հովիկ Անտոնյան՝ «1915» գործի համար

Ֆրենկ Գասպարյան՝ «Լինենք հավերժ» գործի համար

Քանդակ անվանակարգ՝

Գագիկ Ստեփանյան՝ «Եղիցի լույս» գործի համար

Աշոտ Բաղդասարյան՝ «Վերածնունդ» գործի համար

Դեկորատիվ արվեստ անվանակարգ

Ռոբերտ Եսայանին «Ավետիս» գործի համար

Աշոտ Ադամյան՝ «Եղեռն-70» հուշամեդալի համար

Պլակատ անվանակարգ

Հասմիկ Մանուկյան՝ «Ահազանգ» գործի համար

Արթուր Մանուկյան՝ «Եղեռն-1915» գործի համար

Ի տարբերություն նախորդ տարիների, «Մրցանակաբաշխություն-2009»-ի արդյունքները ստեղծագործական միությունների, Ազգային ակադեմիայի կողմից հրապարակվել են մամուլի ասուլիսներում, Կլոր սեղանի շուրջ: Իսկ Հայաստանի նկարիչների միությունը հունիսի 3-ին իր ցուցասրահում բացեց կերպարվեստի լավագույն ստեղծագործությունների «Մրցանակաբաշխություն-2009»-ի շրջանակներում ներկայացված Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված գործերի ցուցահանդես:

Մրցանակաբաշխության արդյունքները լայնորեն լուսաբանվեցին ԶԼՄ-ների կողմից:

Այս ամենի շնորհիվ հանրությունը իրազեկվեց մրցանակաբաշխության ընթացքի, նրա արդյունքների մասին:

Մրցանակաբաշխության արդյունքներին նվիրված մամուլի ասուլիս ՀՀ ԳԱԱ դահլիճում

Մամուլի ասուլիս Հայաստանի գրողների միությունում

Հետաքրքրական են «Մրցանակաբաշխություն-2009»-ի մասին հնչած կարծիքները՝ կազմակերպված մամուլի ասուլիսների, Կլոր սեղանների և ցուցահանդեսի ժամանակ:

«Գիտական լավագույն աշխատանքների ներկա մրցանակաբաշխությունը անց է կացվում Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրամյանի նախաձեռնությամբ և արդեն մեծ հեղինակություն է վայելում մտավորականության միջավայրում: Տեսնելով և զգալով այդ առաջընթացը, մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում Ռուսաստանի հայերի միությանը, Համաշխարհային հայկական կոնգրեսին, այդ կազմակերպությունների ղեկավարին գիտության զարգացման նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար: Իսկ որպես այդ ամենի փոխհատուցում մենք՝ գիտնականներս պետք է մրցանակաբաշխության արդյունքում ստեղծենք գիտական այնպիսի արժեքներ, որոնք համապատասխանեն միջազգային չափանիշներին, ունենան նաև կիրառական նշանակություն»:

Ռադիկ Մարտիրոսյան
ՀՀ ԳԱԱ նախագահ

«Այս մրցույթը գրական կյանքի աշխուժացման ու խթանման, հայրենական մշակույթին զարկ տալու ևս մի կարևոր ու նպա-

տակային քայլ է: Ես բարձր եմ գնահատում Ռուսաստանի հայերի միության, նրա նախագահի աշխատանքը հայկական մշակույթի զարգացման գործում»:

Լևոն Անանյան
Հայաստանի գրողների միության նախագահ

«Առանց Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի հոգատար վերաբերմունքի անհնար կլիներ իրականացնել նման լայնածավալ մրցանակաբաշխություն»:

Ալիտա Դոլուխանյան
գրականագետ, դոկտոր, պրոֆեսոր

Շնորհավորելով բոլոր մրցանակակիրներին, ցանկալի է առաջիկա մրցանակաբաշխության արդյունքում տեսնել գիտության, գրականության, երաժշտության, արվեստի այնպիսի գործեր, որոնք համապատասխանեն միջազգային չափանիշներին, ընդգրկեն համամարդկային կյանքի բոլոր կողմերը:

«ՄԵՆՔ ԵՂԵԼ ԵՆՔ, ՄԵՆՔ ԿԱՆՔ, ՄԵՆՔ ԿԼԻՆԵՆՔ» ՆՇԱՆԱԲԱՆՈՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

Այս մրցույթը մեկնարկել է 2005 թ.՝ Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի առթիվ: Մրցույթը կազմակերպվում է Հայաստանի, Արցախի, Սփյուռքի բարձր դասարանների աշակերտների և ուսանողների համար:

Մրցույթի **հիմնական նպատակն է** Հայաստանի, Արցախի, հայկական Սփյուռքի ուսանողներին ու աշակերտներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի պատմական անցյալին, հավատ սերմանել նրա ապագայի հանդեպ, նպաստել Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման, ազգային միասնության ապահովման և հայապահպանության գործին:

Անցած տարիների ընթացքում մրցույթները կազմակերպվել են՝ **«Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք»**, **«Իմ հին հայ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ»**, **«Ուր էլ լինես ... քո մայր լեզուն չմոռանաս»**, **«Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է»**, **«Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք»**, **«Իմ հեռու, իմ մոտ, իմ սուրբ Հայաստան»**, **«Հիշենք՝ ապրելու, արարելու համար»** թեմաներով:

Ընդհանուր առմամբ անցած վեց մրցույթին մասնակցել են ավելի քան 3000 երիտասարդ, պատանիներ ու աղջիկներ՝ 17 երկրից:

Մրցույթի հաղթողները և ծնողները Ա. Աբրամյանի հետ





Մրցանակակիրներին դիպլոմներ և նվերներ են հանձնում Ա.Աբրամյանը, Հ.Հակոբյանը, Ա.Աշոտյանը, Ռ.Մարտիրոսյանը, Լ.Անանյանը, Ռ.Ամիրխանյանը

2010թ. հունվարի 26-ին Համաշխարհային հայկական կոնգրեսի՝ ի դեմս նախագահ Արա Աբրամյանի և ՀՀ Սփյուռքի նախարարության՝ ի դեմս նախարար Հրանուշ Հակոբյանի միջև կնքվել է **համագործակցության համաձայնագիր «Հայապահպանության գործում ունեցած նշանակալից ավանդի համար»** խորագրով համահայկական ամենամյա մրցույթ կազմակերպելու և անցկացնելու մասին:

Համաձայնագիրը ստորագրված է

Մրցույթի նպատակն է խրախուսել սփյուռքահայ համայնքներում հայ ազգային ինքնության պահպանումն ու զարգացումը, աշխարհասփյուռ հայության միասնականության ապահովումը, հավուր պատշաճի գնահատել և արժևորել ռազմավարական այս գործում կազմակերպությունների և անհատների ունեցած ներդրումը:

Մրցույթին մասնակցում են Սփյուռքում գործող հայկական կազմակերպությունները՝ կրթօջախ, լրատվամիջոց, համայնքային կառույց, հայագիտական կենտրոն, ստեղծագործական խումբ, լավագույն հայկական ընտանիք:

Մրցույթի կազմակերպման և անցկացման համար կազմակերպիչների կողմից ձևավորվել է **Կազմակերպական կոմիտե**, որը իրականացնում է մրցույթի ընդհանուր համակարգումը:

2010թ. հայտարարվել է մրցանակաբաշխություն երկու ոլորտներում՝ **լավագույն հայկական կրթօջախ և լավագույն**

հայկական լրատվամիջոց, որոնցից յուրաքանչյուրի համար ձևավորվել են մասնագիտական մրցութային հանձնաժողովներ: Յուրաքանչյուր ոլորտի համար մի քանի անվանակարգերով սահմանվել են գլխավոր մրցանակներ:

Համահայկական մրցույթը մեծ ուշադրության արժանացավ և հետաքրքրություն առաջացրեց Սփյուռքում: 2010թ. մայիսի 1-ի դրությամբ *«Լավագույն հայկական կրթօջախ»* անվանակարգում մասնակցության հայտ են ներկայացրել 60 հայկական կրթօջախներ՝ աշխարհի 24 երկրներից, այդ թվում՝ Ռուսաստանից և ԱՊՀ երկրներից (Ուկրաինա, Բելոռուս, Ուզբեկստան, Մոլդովա), ԱՄՆ-ից և Լատինական Ամերիկայի երկրներից (Արգենտինա, Ուրուգվայ), Եվրոպայից (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Չեխիա, Բուլղարիա, Հունաստան, Էստոնիա), Մերձավոր և Միջին Արևելքից (Լիբանան, Սիրիա, Իրան, Իրաք, Եգիպտոս), Հնդկաստանից:

«Լավագույն հայկական լրատվամիջոց» անվանակարգում մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել 56 լրատվամիջոց՝ Ռուսաստանից և ԱՊՀ այլ երկրներից, ԱՄՆ-ից, Կանադայից և Լատինական Ամերիկայից, Եվրոպայից, Մերձավոր և Միջին Արևելքից: Դրանց մեծ մասը տպագիր լրատվամիջոցներ են, մնացածը՝ հեռուստա և ռադիոկայաններ: Կան նաև ինտերնետային կայքեր:

Մեկնարկել է նաև Զիվան Գասպարյանի անվան դուդուկահարների Միջազգային մրցույթը, որը նվիրվում է ՌՀՄ 10-ամյակին:

Հիմնադիրներն են՝

- «Համաշխարհային հայկական կոնգրես» հայկական հասարակական կազմակերպությունների միջազգային միությունը
- «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպությունը

Կազմակերպիչներ՝

- Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության հայաստանյան մասնաճյուղ
- Հայաստանի Երաժշտական Ընկերություն

Մրցույթը անց է կացվում ՀՀ Սփյուռքի Նախարարության և ՀՀ Մշակույթի Նախարարության հետ համատեղ

Մրցույթի նպատակը և խնդիրները

- երաժշտակրթական և երաժշտալուսավորչական գործունեության ակտիվացման միջոցով նպաստել դուդուկահարների կատարողական վարպետության բարձրացման, դուդուկի, որպես հայկական ժողովրդական նվագարանի հետ առնչվող ազգային երաժշտական լավագույն ավանդույթների պահպանման ու զարգացման գործընթացներին.
- պրոպագանդել դուդուկի ազգային դպրոցի նվաճումները.
- ի հայտ բերել, աջակցել և խրախուսել շնորհաշատ և օժտված երիտասարդներին.
- կազմակերպել երիտասարդ դուդուկահարների պատրաստման բնագավարում մանկավարժական լավագույն փորձի փոխանակում և պրոպագանդում:

Մրցույթին հրավիրվում են մասնակցելու պատանի և երիտասարդ դուդուկահարներ՝ Հայաստանից, Արցախից, հեռավոր և մերձավոր Սփյուռքից: Մրցույթն անց է կացվում երկու տարիքային խմբերով: